

ՀՏԴ 342. 4

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2015 ԹՎԱԿԱՆԻ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

**ՎԱՇԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

*Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա*

Հոդվածի շրջանակներում ուսումնասիրության նպատակը ՀՀ Ազգային ժողովի և Կառավարության փոխհարաբերությունների ուսումնասիրությունն է 2015 թվականի սահմանադրական բարեփոխումներից հետո: Հետազոտությունը կատարելիս հոդվածում անդրադարձ է կատարվել նախկին կիսանախագահական և գործող խորհրդարանական կառավարման ձևերի առանձնահատկություններին Հայաստանի Հանրապետությունում: Վերլուծվել և ներկայացվել են այն խնդիրները, որոնք առկա են ներկայիս խորհրդարանական կառավարման համակարգում՝ Ազգային ժողով և Կառավարություն փոխհարաբերություններում: Հոդվածում ներկայացվում են նաև խնդրո առարկա հարցի կապակցությամբ իրավաբանական գրականության մեջ առկա որոշ հեղինակների մոտեցումները:

**Բանալի բառեր.** Ազգային ժողով, Կառավարություն, Վարչապետ, սահմանադրական բարեփոխումներ, Սահմանադրություն, խորհրդարանական կառավարման համակարգ:

2015 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում խորհրդարանական կառավարման համակարգին անցմամբ պայմանավորված՝ շեշտակի աճեց ՀՀ Ազգային ժողովի քաղաքական դերակատարությունը երկրի կյանքում: Սահմանադրական բարեփոխումներով բովանդակային, ծավալային առումով նշանակալի փոփոխություններ կատարվեցին Սահմանադրության մեջ: Կառավարման խառը՝ կիսանախագահական կառավարման ձևից անցումը խորհրդարանական կառավարման ձևի, ձևավորեց պետական իշխանության բարձրագույն մարմինների լիազորությունների նոր համակարգ: Էականորեն փոխվեց օրենսդիր իշխանության տեղն ու դերը պետական իշխանության համակարգում, և դրանով պայմանավորված՝ փոփոխվեց նաև օրենսդիր իշխանությունն իրականացնող մարմնի՝ Ազգային ժողովի իրավասության ծավալը: Ազգային ժողովի իրավասության ծավալի փոփոխությունն էլ իր հերթին հանգեցրեց Ազգային ժողովի և պետական իշխանության մյուս մարմինների փոխհարաբերությունների փոփոխությունների:

Սահմանադրական բարեփոխումների արդյուքում կառավարման համակարգի նման կտրուկ փոփոխության հիմնավորվածությունը որոշ մասնագետներ պայմանավորում էին գործող կիսանախագահական կառավարման համակարգում առկա մի շարք խնդիրների առանձնահատկություններով: «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում»-ում (այսուհետև՝ նաև Հայեցակարգ) մասնավորապես հիմնավորվում է այն տեսակետը, որ մեզանում առկա հիմնախնդիրները պայմանավորված են կիսանախագահական կառավարման ձևի առանձնահատկություններով, միևնույն ժամանակ փորձելով հիմնավորել այն առավելություններն ու հնարավորությունները, որոնք կարող են առաջանալ խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում [1, էջ 21-36]: Իրենց հիմնավորումներում անդրադարձ են կատարում բազմաթիվ երկրների խորհրդարանական կառավարման հաջողված փորձին, միաժամանակ համեմատելով նաև նախագահական կամ կիսանախագահական ոչ հաջողված կառավարման համակարգ ունեցող երկրների փորձի հետ [2, c. 204-205]:

Իրավաբանական գրականության մեջ բազմաթիվ են այն տեսակետները, ըստ որոնց պետության կառավարման լավագույն մոդել է համարվում նախագահական կառավարման ձևը: Մասնավորապես՝ Վ. Դ. Ջորկինի կարծիքով Ռուսաստանի համար առավել գերադասելի է նախագահական հանրապետությունը, քանի որ այն բնութագրվում է կայունությամբ և աչքի է ընկնում ճկունությամբ, տարբեր իրավիճակների և քաղաքական ուժերի իրական դասավորվածությանը հարմարվելու ունակությամբ [3, c. 50]: Կառավարման տարբեր մոդելների առանձնահատկությունները վերլուծելով՝ Ռուսաստանի Դաշնության համար նախագահական կառավարման ձևի նպատակահարմարության մասին կարծիք է հայտնում նաև Մ. Ա. Կրասնովը [4, c. 23]:

Այս առումով խորհրդարանական կառավարման համակարգում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Կառավարության փոխհարաբերություններին առնչվող որոշ հիմնահարցերի քննարկումը տեսական և գործնական առումով բավականին արդիական է:

Հարկ ենք համարում անդրադառնալ Ազգային ժողով և կառավարություն փոխհարաբերություններին վարչապետի ընտրության ու նշանակման, և կառավարություն կազմավորելիս, քանի որ ակնհայտ է, որ Ազգային ժողով, կառավարություն և Նախագահ փոխհարաբերությունների առանցքը կազմում են վարչապետի ընտրության և նշանակման, կառավարության ձևավորման և հրաժարականի հիմնախնդիրները: Տարբեր կառավարման ձևեր ունեցող երկրներում այս կարևոր հարցի նկատմամբ

մոտեցումները տարբեր են: Մեզ մոտ նույնպես խորհրդարանական կառավարման ձևի անցնելիս՝ բնականաբար կիրառվեցին Կառավարության ձևավորման և գործունեության բոլորովին նոր կարգավորումներ:

ՀՀ վարչապետի ընտրության ու նշանակման և կառավարության կազմավորման կառուցակարգերը հստակ ամրագրված են ՀՀ Սահմանադրության 149-րդ և 150-րդ հոդվածներում: ՀՀ Սահմանադրության 149-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանրապետության նախագահը նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն սկսվելուց հետո անհապաղ վարչապետ է նշանակում Սահմանադրության 89-րդ հոդվածով սահմանված կարգով ձևավորված խորհրդարանական մեծամասնության ներկայացրած թեկնածուին:

Այլ կարգավորում է գործում այն դեպքում, երբ վարչապետի պաշտոնը թափուր է մնացել ոչ թե Ազգային ժողովի ընտրությունների հետ կապված, այլ Սահմանադրության 158-րդ հոդվածով նախատեսված դեպքերում: Այս իրավիճակում համաձայն ՀՀ Սահմանադրության 149-րդ հոդվածի 3-րդ մասի՝ վարչապետ չընտրվելու դեպքում քվեարկությունից յոթ օր հետո անցկացվում է վարչապետի նոր ընտրություն, որին մասնակցելու իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի առաջադրած վարչապետի թեկնածուները: Եթե պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վարչապետ չի ընտրվում, ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով: Կարելի է կարծել, որ սահմանադրական կարգավորման այսպիսի «մեղմ» մոտեցումը կարող է ունենալ այն տրամաբանությունը, որ վարչապետի ընտրության երկրորդ փուլում, թեկնածուների առաջադրման իրավունքը վերապահելով պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդին, այլ ոչ թե պատգամավորական խմբակցություններին, նաև պայմանավորված է այն հանգամանքով, որ թեկնածուներ առաջարկելու հնարավորություն ունենան տարբեր խմբակցությունների պատգամավորներ, կամ խմբակցություններից դուրս եկած պատգամավորներ:

Անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն հրավիրել սահմանադրական այն կարգավորմանը, համաձայն որի, եթե պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վարչապետ չի ընտրվում, ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով: Պետք է նշել, որ այդ տարբերակն այնքան էլ հաջողված լուծում չէ և կարող է բավականին ռիսկային իրավիճակ ստեղծել երկրում, քանի որ պատերազմական պայմաններում գտնվող երկիրը կարող է երկար ժամանակ մնալ առանց վարչապետի, իսկ ՀՀ Սահմանադրության 155-րդ հոդվածի 4-րդ մասին կարգավորմանը համաձայն՝ պատերազմի ժամանակ զինված ուժերի գերագույն

հրամանատարը վարչապետն է (հոդ. 155): Բացի այդ, նոր խորհրդարանական ընտրություններից հետո չկա որևէ երաշխիք, որ նոր ձևավորված Ազգային ժողովում հնարավոր կլինի ստեղծել կայուն մեծամասնություն:

Կառավարության կազմավորման հարցում առանցքային դեր է վերապահված վարչապետին: Ձևական իրավական տեսանկյունից փոխվարապետներին և նախարարներին նշանակում է ՀՀ նախագահը: Համաձայն սահմանադրական կարգավորումների՝ վարչապետ նշանակվելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում կազմավորվում է կառավարությունը: Վարչապետը նշանակվելուց հետո հնգօրյա ժամկետում Հանրապետության նախագահին է առաջարկում փոխվարչապետների և նախարարների թեկնածուներին: Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում պետք է կամ նշանակի փոխվարչապետներին և նախարարներին, կամ դիմի Սահմանադրական դատարան: Եթե Սահմանադրական դատարանը որոշում է կայացնում, որ վարչապետի կողմից առաջարկված թեկնածուն չի համապատասխանում Սահմանադրությամբ կառավարության անդամին ներկայացվող պահանջներին, այդ պարագայում Նախագահը մերժում է համապատասխան պաշտոնի նշանակումը: Այլ դեպքում եթե Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում մերժում է կառավարության անդամի նշանակումը, ապա համապատասխան փոխվարչապետը կամ նախարարը նշանակված է համարվում իրավունքի ուժով (հոդ. 150):

Այս պարագայում կարելի է փաստել, որ ձևավորվում է այն նույն իրավիճակը, որը նկարագրված է Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում: Մանավորապես՝ Հայեցակարգում կիսանախագահական կառավարման համակարգում առկա խնդիրների մեջ, ի թիվս այլ խնդիրների առանձնացվում է հետևյալը. «Ազգային ժողովում Հանրապետության նախագահի բացարձակ մեծամասնության առկայության և ներխորհրդարանական հակակշիռների բացակայության պայմաններում մեծանում է քաղաքական մենիշխանության վտանգը: Դա հանգեցնում է նրան, որ բացարձակ է դառնում նախագահական իշխանությունը՝ չունենալով գործունե հակակշիռներ ո՛չ օրենսդիր և ո՛չ գործադիր իշխանության կողմից» [1, էջ 27-28]: Այստեղ տարբերությունը կայանում է նրանում, որ խորհրդարանական կառավարման համակարգում սահմանադրորեն հնարավորություն է տրված բացարձակ դարձնելու արդեն վարչապետի իշխանությունը, քանի որ Հանրապետության նախագահի ունեցած լիազորություններն ըստ էության վճռորոշ նշանակություն չեն ունենում: Այսինքն՝ ստեղծվել է այնպիսի իրավիճակ, որ քննադատելով կիսանախագահական կառավարման ձևի պայմաններում ամբողջ իշխանությունը մեկ անձի ձեռքում կենտրոնացնելու վտանգը՝ խորհրդարանական կառա-

վարման համակարգի անցնելուց հետո ամբողջ իշխանությունը կենտրոնացել է մեկ մարդու՝ վարչապետի ձեռքում, երկրում ստեղծելով այսպես կոչված «սուպերվարչապետական» համակարգ:

Կառավարության կազմավորումից հետո Սահմանադրությամբ նախատեսված է, որ վարչապետն քսանօրյա ժամկետում Ազգային ժողով է ներայացնում կառավարության ծրագիրը: Իսկ Ազգային ժողովը Կառավարության ծրագրին հավանություն է տալիս յոթնօրյա ժամկետում՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Այս կարգավորմամբ փաստորեն Ազգային ժողովին հնարավորություն է տրված, որպեսզի Ազգային ժողովը՝ որպես Կառավարության նկատմամբ վերահսկողական գործառույթ ունեցող մարմին, ուղղակի ձևով իր վերաբերմունքն արտահայտի վարչապետին կամ կառավարությանը՝ Կառավարության ծրագրին հավանություն տալու կամ չտալու միջոցով: Կառավարության ծրագրին հավանություն չտալու հիմքով վարչապետի հրաժարականը վերաբերում է միայն նոր ձևավորված կառավարությանը: Սահմանադրության 151-րդ հոդվածի կարգավորումների համապատասխան՝ եթե Ազգային ժողովը հավանություն չի տալիս Կառավարության ծրագրին և չի ընտրում նոր վարչապետ, ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով, իսկ եթե Ազգային ժողովն ընտրում է վարչապետին, սակայն կրկին հավանություն չի տալիս Կառավարության ծրագրին, ապա այդ դեպքում նույնպես Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով: Ազգային ժողովի և Կառավարության փոխհարաբերություններն այս խնդրում բավականին վիճահարույց են, քանի որ եթե վարչապետը նշանակվել է Ազգային ժողովի առաջարկությամբ, ապա կարելի է ենթադրել, որ արդեն իսկ հավանություն է տվել նրա առաջարկած ծրագրին, տեսակետներին, որոնք ուղղված են երկրի ներքին և արտաքին քաղաքականությանը: Այս հնարավոր խնդիրը կարելի է որոշակիորեն հաղթահարել, եթե խորհրդարանական ընտրությունների արդյունքում մեկ կուսակցությունը կամ կուսակցությունների դաշինքը խորհրդարանում ունենա մեծամասնություն: Այնուամենայնիվ, Կառավարության կազմավորման հարցում փակուղային իրադրությունները լուծելը, ինչը, որպես վերջին միջոց, ենթադրում է նաև խորհրդարանի արձակումը, միանգամայն արդարացված է սահմանադրական ժողովրդավարության պայմաններում: Նույնը վերաբերում է նաև ծրագրի հիման վրա վստահություն հայտնելու մասին առաջարկությանը, ինչը կարող է դիտվել որպես կառավարության արդյունավետ աշխատանք ապահովելու քաղաքական նախադրյալների կառուցակարգ [5, էջ 64-65]:

Հայեցակարգում կիսանախագահական կառավարման առկա խնդիրների լուծման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումներում բավականին

կարևորություն է տրվում Ազգային ժողովի օրենսդրական գործունեության և վերահսկողական դերի հետագա ամրապնդմանը՝ այն համարելով առանձնահատուկ կարևորության խնդիր, քանի որ անհրաժեշտ է ամրապնդել Ազգային ժողովի մարմինների դերն օրենսդրական գործունեության բնագավառում [1, էջ 25]:

Վերահսկողական գործունեության կապակցությամբ կարևոր է նշել Ի. Վ. Գրանկինի հետևյալ տեսակետը. «Վերահսկողական գործունեությունն որպես այդպիսին, այս կամ այն չափով հատուկ է գրեթե յուրաքանչյուր պետական մարմնի: Այսպես, խորհրդարանը վերահսկում է կառավարության աշխատանքը, կառավարությունը հետևում է պետական ապարատի աշխատանքին՝ առաջին հերթին նախարարների, իսկ վերջիններս էլ՝ իրենց ենթակաների աշխատանքին: Այսպիսով, ցանկացած բնագավառում պետական մարմինը միշտ հսկողություն է իրականացնում համակարգերի ստորադաս օղակների նկատմամբ» [6, c. 5]: Խորհրդարանի վերահսկողական գործունեության վերաբերյալ առանձնակի կարծիք է հայտնել նաև Ս. Լոքյանը. «Վերահսկողությունն անխզելիորեն հատուկ է խորհրդարանին: Այնուամենայնիվ, չի կարելի համաձայնել, որ խորհրդարանական վերահսկողությունը «վերահսկողություն է համակարգի ստորադաս օղակների նկատմամբ», այսինքն՝ նույնական է կառավարության՝ իր ենթակա ապարատի նկատմամբ վերահսկողության հետ: Խորհրդարանն օրենսդիր իշխանության մարմին է, իսկ կառավարությունը՝ գործադիր իշխանության: Խորհրդարանը կառավարության նկատմամբ վերադաս մարմին չէ, հետևաբար կառավարությունը ստորադաս չէ խորհրդարանին: Կառավարությանը վերահսկելու խորհրդարանի իրավունքը բխում է ոչ թե վերադաս ենթակա փոխհարաբերություններից, այլ անմիջական ժողովրդաիշխանության բնույթից [7, էջ 134]:

Գործող Սահմանադրությամբ ամրագրված են այն հիմքերը, որոնք ապահովում են Ազգային ժողովի և կառավարության փոխհարաբերությունները օրենսդրական գործունեության բնագավառում: Ժամանակակից ժողովրդավարական երկրներում օրինաստեղծ գործունեության հիմնական պատասխանատվությունը դրված է խորհրդարանների վրա, և խորհրդարաններն միաժամանակ վերահսկողություն են իրականացնում կառավարության գործունեության նկատմամբ: Այս կապակցությամբ տեղին է պրոֆ. Գ. Դանիելյանի հետևյալ նկատառումը. «Խորհրդարանի ողջամիտ կարգավիճակը ենթադրում է, որպեսզի այն հիրավի դիտարկվի օրինաստեղծ գործունեության քաղաքականությունը որոշող և իրակա-

նացնող կառույց» [8, էջ 29]: Կառավարությունն իր օրենսդրական նախաձեռնության իրավունքն իրականացնելիս հնարավորություն ունի օրենքների նախագծեր, գործող օրենքներում փոփոխություններ կամ օրենքի նախագծերի փաթեթներ ներկայացնելու Ազգային ժողով: Անհրաժեշտ է ուշադրություն հրավիրել բավականին կարևոր հանգամանքի վրա, որն առկա է Ազգային ժողովի և կառավարության փոխհարաբերություններում օրենսդրական գործընթացի հետ կապված:

«Սահմանադրության 109-րդ հոդվածի մասի համաձայն «Այն օրենքների նախագծերը, որոնց օրենսդրական նախաձեռնության բացառիկ իրավունքը պատկանում է Կառավարությանը, քվեարկության կարող են դրվել միայն Կառավարության համար ընդունելի ուղղումներով» (հոդ. 109, մաս 4): Այս հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ Կառավարությունը դուրս է գալիս իր լիազորությունների սահմանից և մտնում է օրենսդիր իշխանության ոլորտ այն պարագայում, երբ Սահմանադրությամբ ամրագրված է, որ օրենքի ընդունումը բացառապես Ազգային ժողովի գործառույթն է: Նման սահմանադրական կարգավորում գործում էր նաև Կիսանախագահական կառավարման համակարգի դեպքում: Մասնավորապես՝ 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 75-րդ հոդվածի 2-րդ մասում նշված է. «Կառավարությունը կարող է սահմանել իր ներկայացրած օրենքների նախագծերի քննարկման հաջորդականությունը և կարող է պահանջել, որ դրանք քվեարկության դրվեն միայն իր համար ընդունելի ուղղումներով»: Փաստորեն որքան էլ զարմանալի է, այնուամենայնիվ վերը նշված հոդվածի դրույթները տեղ են գտել նաև փոփոխված Սահմանադրության մեջ:

Ազգային ժողովի վերահսկողական գործառույթը Կառավարության նկատմամբ առանձնահատուկ կերպով դրսևորվում է Սահմանադրությամբ ամրագրված այնպիսի դրույթներում ինչպիսիք են՝ պատգամավորներին բանավոր և գրավոր հարցեր ուղղելով, հարցապնդումների միջոցով, պետական բյուջեի կատարման նկատմամբ ունեցած վերահսկողությամբ և այլն: Գործող Սահմանադրական կարգավորումներով հերթական նստաշրջանի՝ նիստերի շաբաթվա ընթացքում գումարվող նիստերից մեկում Կառավարության անդամները պատասխանում են պատգամավորների բանավոր հարցերին: Պետք է նշել, որ պատգամավորների հարցերի կապակցությամբ Ազգային ժողովը որոշումներ չի ընդունում, նաև Ազգային ժողովում չեն քննարկվում այն գրավոր հարցերի պատասխանները, որոնք պատգամավորների կողմից ուղղվել են Կառավարության անդամ-

ներին: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ շատ երկրներում խորհրդարանի և կառավարության միջև փոխհարաբերություններում կարևորվում է նման օրենսդրական կարգավորումը: Այս կապակցությամբ պետք է փաստել, որ ավելի նպատակահարմար կլիներ Հայեցակարգում ներառել նաև այս կարևորագույն խնդիրը, քանի որ այն բավականին ազդեցություն է ունենում Ազգային ժողովի վերահսկողական գործառույթի արդյունավետ իրականացման նկատմամբ: Նմանատիպ անորոշություն է նաև այն դեպքերում, երբ պատգամավորների հարցերին Կառավարության կողմից տրվում են անբավարար և ոչ սպառիչ պատասխաններ:

Ազգային ժողովի կողմից Կառավարության նկատմամբ վերահսկողական գործառույթ իրականացնելու այլ կառուցակարգ է նաև Կառավարությանը հարցապնդումներով դիմելու Ազգային ժողովի խմբակցությունների իրավունքը: ՀՀ Սահմանադրության 113-րդ հոդվածով նախատեսվում է, որ Կառավարության անդամները հարցապնդմանը պատասխանում են այն ստանալուց ոչ ուշ, քան երեսուն օրվա ընթացքում: Հարցապնդումների պատասխանները ներկայացվում են Ազգային ժողովի նիստում:

Սահմանադրական կարգավորումներով նախատեսվում է, որ քննարկման արդյունքով պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից կարող է վարչապետին անվստահություն հայտնելու առաջարկ ներկայացվել: Ինչպես նաև նույն հոդվածի կարգավորմանը համաձայն հնարավոր է հարցապնդման արդյունքով Ազգային ժողովը առաջարկել վարչապետին քննարկել Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը: Հարկ է նշել, որ նախկին Սահմանադրությամբ նման կարգավորում չէր նախատեսվում: Նման կարգավորում նախատեսելը բավականին ողջունելի քայլ կարելի է համարել, քանի որ հնարավորություն է տալիս Ազգային ժողովին իր վերաբերմունքը ուղղակի արտահայտել Վարչապետի կամ Կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման կապակցությամբ:

Փորձելով ամփոփել վերը շարադրվածը՝ պետք է փաստել, որ գործող խորհրդարանական կառավարման համակարգի պայմաններում, Ազգային ժողովը դարձել է պետական իշխանության ամբողջ համակարգի առանցքը, որն էլ իր վճռորոշ ազդեցությունն է ունենում պետական իշխանության մյուս բոլոր մարմինների ձևավորման վրա: Այս համատեքստում պրոֆ. Հ. Հակոբյանը փաստում է, որ խորհրդարանը գործող ինստիտուտ է դառնում, եթե օրենքների ընդունման բացառիկ իրավունքը պատկանում է խորհրդարանին, եթե այն ձևավորում է կառավարություն կամ մասնակ-



ցում վարչապետի նշանակմանը, եթե կառավարությունը սահմանադրական, քաղաքական պատասխանատվություն է կրում խորհրդարանի առջև: Այն՝ որպես համակարգ, լիովին կարող է գործել, եթե իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա հավասարակշռության և հակակշիռների կառուցակարգերի պայմաններում համաչափ գործում են իշխանության երեք ճյուղերը [9, էջ 67]:

Իրավաբանական գրականության մեջ, ինչպես նաև բազմաթիվ քաղաքական գործիչների արտահայտած տեսակետներում կարևորվում է առավել սերտացնել Ազգային ժողով և Կառավարություն փոխհարաբերությունները: Այս կապակցությամբ Հեգելը նշում է. «Օրենսդիր մարմնից պահանջել հրաժարվել կառավարության անդամներից՝ հետևանք է պետությունում մի կարևոր հայեցակետի: Անգլիայում նախարարները պետք է լինեն խորհրդարանի անդամ, և դա ճիշտ է, քանի որ պետության կառավարման մասնակիցները պետք է կապի մեջ գտնվեն օրենսդիր իշխանության հետ և ոչ թե իրենց հակադրեն նրանց» [10, c. 339]:

Իսկ ռուս քաղաքական գործիչ Պ. Միժուևը նշում է. «Խորհրդարանում տիրող տրամադրությունների ու հոսանքների և նախարարությունների՝ երկիրը կառավարելու նախարարությունների բնույթի միջև պետք է հաստատվի ամենասերտ համապատասխանություն, ամբողջական համաձայնություն» [11, c. 4]:

Այսպիսով, երկու մարմինների միջև փոխհարաբերությունների և փոխադարձ համագործակցության բարձրացման, ինչպես նաև առկա խնդիրների մասին բարձրաձայնելու, և այդ խնդիրներին ողջամիտ լուծումներ տալու նպատակով՝ առաջարկվում է Սահմանադրության հետագա բարեփոփոխումների նախագծերում ներառել.

1. Ազգային ժողովին իրավունք վերապահել ընդունելու որոշումներ՝ պատգամավորների կողմից Կառավարության անդամներին ուղղված բանավոր հարցերի կապակցությամբ:

2. Կոնկրետ մեխանիզմներ մշակել Ազգային ժողովի պատգամավորների հարցերին Կառավարության անդամների կողմից անբավարար և ոչ սպառիչ պատասխաններ ներկայացնելու դեպքում:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. «ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ», մշակվել է ՀՀ սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան, 2014 թ., 45 էջ:
2. **Медушевский А. Н.**, Сравнительное конституционное право и политические институты. М., 2002, 511 էջ :
3. **Зорькин В. Д.**, О президенте в конституционном строе РФ // "Конституционный вестник", 1990, № 2, 304 էջ:
4. **Краснов М. А.**, Россия как полупрезидентская республика: проблема баланса полномочий // "Государство и право", 2003, № 10:
5. Սահմանադրությունից՝ սահմանադրականություն, Հարությունյան Գ., Երևան, 2004, 137 էջ:
6. **Гранкин И. В.**, Определение статуса Федерального Собрания РФ и проблемы его совершенствования // Государство и право, 2005, N 6.
7. Հանրային կառավարում: Գիտական հանդես: 1 /2016, Ս. Լոքյան, Խորհրդարանական վերահսկողության իրավական բովանդակությունը և նշանակությունը, 195 էջ:
8. Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական հետազոտություն **Դանիելյան Գ., Ավագյան Վ., Մանասյան Ա.**-Երևան, Հայրապետ հրատ. 2015 թ. 240 էջ:
9. Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Հակոբյան Հ., Երևան, 2007, 708 էջ:
10. **Гегель Г.**, Философия права, М., 1934,. 503 с:
11. **Мижусев П. Г.**, Парламентаризм и представительная форма правления в главных странах современной Европы, СПб., 1906.

---

**ВЗАИМООТНОШЕНИЯ НАЦИОНАЛЬНОГО СОБРАНИЯ  
ПРАВИТЕЛЬСТВА АРМЕНИИ (РА) В КОНТЕКСТЕ  
КОНСТИТУЦИОННЫХ РЕФОРМ 2015-ГО ГОДА**

**ВАГЕ БАГДАСАРЯН**

---

*Академия государственного управления Республики Армения*

---

Целью исследования в рамках статьи является изучение отношений между Национальным Собранием Республики Армения и Правительством Республики Армения после конституционных реформ 2015 года. При проведении исследования, в статье было обращено внимание на особенности прежней полупрезидентской и действующей парламентской форм правления в Республике Армения (РА).

Были анализированы и представлены те проблемы, которые существуют во взаимоотношениях Национального собрания и Правительства при нынешней парламентской системе правления.

В статье представляются подходы некоторых авторов, имеющиеся в юридической литературе в отношении к этой проблеме.

**Ключевые слова:** Национальное Собрание, Правительство, Премьер-министр, конституционные реформы, Конституция, парламентская система правления.

**THE RELATIONS BETWEEN THE NATIONAL ASSEMBLY AND THE  
GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE CONTEXT OF  
THE 2015 CONSTITUCIONAL REFORM**

**VAHE BAGHDASARYAN**

---

*Public Administration Academy of the Republic of Armenia*

---

The purpose of this article is to analyse the relationship between the National Assembly and the Government of Armenia after the constitutional reform in 2015. In the course of the research, the article refers to the peculiarities of the former semi-presidential and current parliamentary government form in the Republic of Armenia. The existing issues in the current parliamentary governance system between the National Assembly and the Government relations have been analysed and presented.

The article also presents the different approaches of some authors in the legal literature on the subject in question.

**Keywords:** National Assembly, Government, Prime Minister, Constitutional Reforms, Constitution, Parliamentary Governance System.

*Ներկայացվել է խմբագրություն 01.04.2020  
Երաշխավորվել է տպագրության 28.04.2020*